



ՈԶՆԵՆԻ ԿԼՈՐԱԳԼՈՒԽ *Echinops sphaerocephalus*



1. ----- Նկարագրություն
2. ----- Հայկական տարանուններ
3. ----- Քիմիական բաղադրություն
4. ----- Բուժական նշանակություն
5. ----- Դեղատոմսեր

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ոզնենի կլորագլուխ լատ.՝ *Echinops sphaerocephalus*), Աստղածաղկավորների կամ բարդածաղկավորների ընտանիքին պատկանող, մինչև 1,5 մ բարձրության, հաստ առանցքային արմատով խոտաբույս է: Ունի ակոսավոր, սպիտակ, գեղձային ցողուն, փետրածև, եզրերը փշաատամնավոր տերևներով: Ծաղիկները խողովակավոր են, վառ մուգ-երկնագույն՝ հավաքված 3,5-4,5 սմ տրամագիծ ունեցող գնդաձև ծաղկաբույլի մեջ: Պտուղը զլանաձև է, մինչև 0,6սմ երկարությամբ, գազաթի վրա ունի թագակերպ ուրվագծով փոմփոլիկ, զարգանում է աննշարմանք՝ անջատվող փշիկներով պատված փաթաթանի մեջ: Ոզնենու տեսքը շատ գեղարվեստական է, հաճախ է օգտագործվում պարտեզներում՝ որպես զարդաբույս: Գնդաձև ծաղիկները մթնշաղի մեջ փայլում են՝ ինչպես տոնածառի խաղալիքները, որոնք տատանվում են մեղմիկ գեփյուռից: Ծաղկաբույլերը իրենցից ներկայացնում են զամբյուղներ՝ ամպագույն կամ մոխրագույն երանգով: Բույսը ծաղկում է ամբողջ ամռան ընթացքում, պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ծաղկահյութը մեծ քանակությամբ շաքարներ է

պարունակում: Ոզնենի սովորականով ծածկված 1 հա մարգագետնի մեղվատվությունը 340 կգ է: Պտղակալում է կանոնավոր, ձմեռում՝ լավ, բազմանում սերմերով, երբեմն էլ՝ արմատամերձ ելունդներով: Ոզնենի գնդակերպի՝ *E.Sphaerocephalus* տերևները բաժանված են նշտաբաձև-եռանկյունի՝ սուր ծայրերով ատամիկների, տերևների վերևի երեսն անհարթ է՝ պատված կպչուն, խավապատ գեղձիկներով: Այս տեսակի

մեղրատվությունը հասնում է մինչև 500-700 կգ/ հա: Որպես մոլախոտ հանդիպում է Հայաստանի Հանրապետության բոլոր գոտիներում, բացառությամբ ցածրադիր գոտու: Աճում է աղբուտներում, ճամփեզրերին, տնամերձ հողամասերում, խամահողերում, լեռնալանջերին, արոտավայրերում և այլուր՝ հաճախ տալով ոչ ընդարձակ բուսուտներ: Մեր հանրապետությունում աճում է 10 տեսակ, որոնցից շատերն ունեն որոշակի բուժական նշանակություն: «Էխինոպսը» ծագել է հունական «էխինոս» բառից, որը նշանակում է «ոզնակերպ», իսկ «սֆերոցեֆալուս» նշանակում է գնդագլխիկ, ելնելով այն բանից, որ բույսի պտղագլխիկները գնդաձև են:



Թուփոճիկ

Թուփ-փուշ

Հզնենի

Ոգնագլխիկ

Ոգնածաղիկ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱՆՈՒՆԵՐ



Ոգնիկ

Փշակն

Փուշ խնձոր

Փուշ ծաղիկ

Քաղցր փուշ

նաև 25-27% ճարպայուղ: Ոգնենու մյուս մասերում հայտնաբերված է նաև մինչև 110մգ% C վիտամին: Սերմը պարունակում է օրգանական միացություններ, այդ թվում՝ մինչև 28 տոկոս ճարպեր: Ավանդական բժշկությունը վաղուց ի վեր կիրառում է բույսին բնորոշ էխինոպսին ալկալոիդը, որի դեղաբանական հատկությունները մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել: E. ritro տեսակի սերմը պարունակում է մինչև 1,5-2% էխինոպսին:



ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սերմերը պարունակում են մինչև 1,5-2% ալկալոիդ էխինոպսին, ինչպես



ազգերի ժողովրդական բժշկության մեջ ամբողջ դեղաբույսն օգտագործվել է գլխացավերի և մաշկային որոշ հիվանդությունների դեպքում, ինչպես նաև որպես միզամուղ և քրտնամուղ միջոց: Ն.Պ. Դորնիկովան, ներարկման կամ ներքին ընդունման ձևով, էխինոպսինն օգտագործել է հիպերտոնիկ հիվանդությամբ տառապող անձանց մոտ: Դեղորայքի միանվագ ներարկման («սուր փորձ») պայմաններում հեղինակը նկատել է օսցիլյատոր ինդեքսի մեծացում, մի հանգամանք, որը վկայում է անոթների պատի տոնուսի ճկունության բարձրացման մասին: 3-4 շաբաթ տևողությամբ, բուժման կուրսն ավարտելուց հետո, հեղինակն արձանագրել է հիվանդների զարկերակային արյան ճնշման կայուն բարձրացում, գլխացավերի, ընդհանուր թուլության, հոգնածության մեղմացում կամ լրիվ վերացում: Հիվանդներն առույգացել են, քունը և ախորժակը լավացել: Էխինոպսինի կիրառումից դրական արդյունք է արձանագրվել նաև նյարդային հիվանդությունների կլինիկայում: Այսպես, գոտկասրբանային ռադիկուլիտների և նրբոլորային նյարդի ախտահարումների ժամանակ հիվանդների մի մասը ստացել է միայն էխինոպսին, իսկ մյուս մասը՝ հանրահայտ ընդհանուր միջոցներ: Պարզվել է, որ էխինոպսինից նկատվում են ավելի շատ և ավելի շուտ

ԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Բուժման նպատակով օգտագործում են միայն սերմերը՝ առանց փուփուլիկների: Լրիվ հասունացած ոզնագլխիկները հավաքելուց հետո չորացնում են տանիքում կամ վառարանի մեջ, հետո փշրելով, հեռացնում են փուփուլիկները, թողնելով միայն սերմիկները: Որոշ

առողջացման
Դեղամիջոցի

դեպքեր:



կիրառումից հուսալի տվյալներ ստացվել են նաև կողմնային ատրոֆիկ սկլերոզով, պոլիոմիելիտային անդամալուծությամբ,

ցրված սկլերոզով, բորբոքական պրոցեսի հետ կապված՝ դիմանյարդի պարեզով և տեսանյարդի ատրոֆիայով տառապող բազմաթիվ հիվանդների մոտ (Գ.Պ. Գուրինա, Տ.Յա. Յանկելևիչ): Դեղորայքն արդյունավետ է ներգործել նոր սկսվող պրոցեսի վրա. ուշացած դեպքերում նկատվել է ավելի թույլ արդյունք: Էխինոպսինը բարձրացնում է ողնուղեղի ռեֆլեկտոր գրգռվածությունը, տոնուսավորում կմախքային մկանները, առաջ բերում օրգանիզմի ընդհանուր ուժերի ակտիվացում: Այն լայնորեն կիրառվում է կլինիկայում՝ կենտրոնական և ծայրամասային նյարդերի ախտահարումների (պարեզ, կաթված, պլեքսիտ, ռադիկուլիտ, մկանային ատրոֆիա և այլն), միոպաթիայի, ասթենիկ վիճակի, ռադիոակտիվ ճառագայթումից առաջ եկած հիպոտոնիայի ժամանակ և այլն (Մ.Դ. Մաշկովսկի): Ըստ որում՝ պատրաստուկի փոքր դոզաները բարձրացնում, իսկ մեծ դոզաներն իջեցնում են արյան ճնշումը: Ն.Գ. Կովալևսկան դեղաբույսի պտուղներն օգտագործում է որպես կարդիոտոնիկ միջոց՝ արթնոսկլերոզի և հիպերտոնիկ հիվանդության ժամանակ:

Սերմի պատրաստուկներն ունեն առույգացնող, սրտի աշխատանքը և արյան ճնշումը կարգավորող, մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը բարձրացնող հատկություն: Վերջին տարիներին մեծացել է նաև բժիշկ ֆիտոթերապևտների հետաքրքրությունը բույսի հանդեպ:

Հիպոտոնիա. 2 ճ/գ մանրացրած սերմը 10 օր թրմեք 500մլ օդու մեջ, քամեք: Խմեք 20-ական կաթիլ՝ նախաճաշից և ճաշից առաջ՝ 50 մլ ջրի հետ:

Հիպերտոնիայի

հետևանքով

առաջացած

գլխացավ. 1 ճ/գ սերմը 3 ժամ թրմեք 300 մլ եռջրում: Խմեք 2-ական ճ/գ՝ օրը 3 անգամ, սնվելուց առաջ:



Զարկերակային ճնշումը կարգավորող.

Զգուշորեն մաքրեք սերմերը, քանի որ դրանց վրա կարող են փշեր լինել: 5-6 գրամ հումքին ավելացրեք 500 մլ 70%-ոց սալիքա:



Թրմելու

նվազագույն ժամկետը երեք շաբաթ է, որից հետո անհրաժեշտ է ոչ միայն քամել, այլև գտել ոգեթուրմը:

ԴԵՂԱՏՈՄՍԵՐ




Հիպերտոնիայի դեպքում խմեք 20-ական կաթիլ՝ առավոտյան և երեկոյան, սնվելուց կես ժամ առաջ: Շարունակեք 2 ամիս:

Հիպոտոնիայի դեպքում խմեք 10-ական կաթիլ:

Կաթվածի (պարալիշ), մկանների ապաճման դեպքում շփեք հիվանդ մասերը:

Տեսողական նյարդի ապաճման դեպքում՝ խմեք 10-20 կաթիլ, օրը 2 անգամ՝ նախաճաշից և ճաշից առաջ:




Նույն ոգեթուրմով շփեք ինսուլտի կամ մեխանիկական վնասվածքի հետևանքով կաթվածահարված ծայրանդամները: Ինչպես պարզ դարձավ վերոգրյալից՝ ոգեթուրմը

20-ական կաթիլ խմելիս՝ իջեցնում է ճնշումը, իսկ 10-ական կաթիլը՝ բարձրացնում:

Ոգնենու պատրաստուկները պարունակում են ազդեցիկ, կենսաբանորեն ակտիվ նյութեր. դրանք պետք է խմել միայն բժշկի հետ խորհրդակցելուց հետո:

Անուժականության, ասթենիկ սինդրոմ.

1 թ/գ սերմը 15 օր թրմեք 500մլ օդու մեջ, քամեք, զտեք: Խմեք 20-ական կաթիլ՝ օրը 2 անգամ, սնվելուց առաջ:



Եռաձյուղ բորբոքում.

Խառնեք 1 թ/գ ոգնենու սերմ,

նյարդի



3-ական թ/գ խնկածաղկի, դադձի, պատրինջի խոտերը: 4 ժամ թրմեք 200մլ եռջրում: Քամեք, ավելացրեք նույն քանակի սև բարդու կամ կաղամախու (դողդոջուն բարդի) 10%-ոց ոգեթուրմ:

Այս պատրաստուկն ունի ցավազրկող հատկություն, կիրառեք թրջոցի ձևով. օգտակար է նաև հոդացավերի, ռադիկուլիտի, ողնաշարի օստեոխոնդրոզի, մկանային թուլության դեպքում:

Այս

հրատարակությունը
(խմբագրությունը)
ներկայացնում է



<<Հայաստանի
գյուղական
համայնքներում

ագրոկենսաբազմազանության պահպանության և
օգտագործման միջոցով կենսապայմանների
բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը:
Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից
աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է
Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի
շրջակա միջավայրի ծրագրի իրականացման
աջակցությամբ (UNEP):